

## Գնահատման վարժություն

### **Կոնֆլիկտային իրավիճակներում գործելու ռազմավարություններ**

Ստորև ներկայացվող գործողությունները կոնֆլիկտային իրավիճակներում գործելու մոտեցումներ են: Ընթերցե՛ք դրանք և օգտագործելով ներկայացվող 5 բալանոց գնահատման սանդղակը՝ յուրաքանչյուր նախադասության կողքին նշե՛ք, թե վարքագծի այդ տեսակները որքանով են բնորոշ ձեզ:

5 = ես հենց այդպես եմ վարվում կոնֆլիկտային իրավիճակներում

4 = ես հաճախակի եմ այդպես վարվում կոնֆլիկտային իրավիճակներում

3 = երբեմն ես այդպես եմ վարվում կոնֆլիկտային իրավիճակներում

2 = հազվադեպ եմ այդպես վարվում կոնֆլիկտային իրավիճակներում

1 = ես երբեք այդպես չեմ վարվում կոնֆլիկտային իրավիճակներում:

----- 1. Նուրբ խոսքերը հաղթում են ծանր սրտերը:

----- 2. Եթե դու չես կարող ուրիշին ստիպել մտածել քեզ նման, ապա ստիպիր նրան

անել այն, ինչ դու ես մտածում:

----- 3. Ավելի հեշտ է վեճից խուսափելը, քան վեճում գիջելը:

----- 4. Փափուկ խոսքերը երաշխավորում են փափուկ ընթացք:

----- 5. Արի՛ միասին լուծենք խնդիրը:

----- 6. Երբ երկուսը վիճում են, առավել խելամիտ է նրանցից առաջինը լռողը:

----- 7. Ուժը հաղթում է ճշմարտությանը:

----- 8. Ես քեզ, դու՝ ինձ:

----- 9. Ավելի լավ է մի բռթոն, քան ոչինչ:

----- 10. Հաղթում են նրանք, ովքեր հավատում են իրենց հաղթանակին:

----- 11. Հեռո՛ւ մնացեք այն մարդկանցից, որոնք ձեզանից տարբեր են եւ

համակարծիք չեն ձեզ հետ:

-----12. Հավասար փոխանակումը վեճ չի առաջացնում:

-----13. Բարի խոսքերը թանկ արժեն, բայց քիչ են գնահատվում:

-----14. Ճշմարտությունն իմացության մեջ է, ոչ թե մեծամասնության կարծիքի:

-----15. Միայն նա, ով պատրաստ է հրաժարվել ճշմարտության մենաշնորհից, կարող

է օգտվել այլոց ճշմարտություններից:

-----16. Փափուկ խոսքերն ապահովում են ներդաշնակություն:

-----17. Նա, ով չի փախչում, ստիպում է, որ մյուսները փախչեն:

-----18. Խուսափե՛ք կռվարար մարդկանցից, քանի որ նրանք ձեր կյանքը կդարձնեն դժոխք:

-----19. Լավ նվերը կարող է ընկերության հիմք դառնալ:

----- 20. Ձեր կոնֆլիկտների մասին խոսեք բաց և ուղղակի: Միայն այդ դեպքում

կգտնեք լավագույն լուծումները:

----- 21. Անընդհատ փորփրելով՝ կարելի է հասնել ճշմարտության:

----- 22. Ոտքդ դիր այնտեղ, որտեղ ուզում ես կանգնել:

----- 23. Կոնֆլիկտների լուծման լավագույն ձևը դրանցից խուսափելն է:

----- 24. Քո ուզածի մի մասը ստանալը ավելի լավ է, քան ոչինչ չստանալը:

-----25. Անկեղծությունը, ուղղամտությունը և վստահությունը սարեր կշարժեն:

-----26. Կյանքում չկան այնպիսի բաներ, որոնց համար արժե կոնֆլիկտ ստեղծել:

-----27. Երբ կողմերը գիջում են կեսը, արդար լուծումը հնարավոր է դառնում:

-----28. Եթե որևէ մեկը ձեզ խփում է քարով, դուք խփեք բամբակով:

-----29. Աշխարհում կան երկու տեսակի մարդիկ` հաղթողներ և պարտվողներ:

-----30. Զեզությունը կհաղթի բարկությանը: